

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ**

Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած և համալսարանի ուսանողական, հասարակական կազմակերպությունների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողներին խրախուսման համար, Համալսարանի կանոնադրության 7-րդ կետի գ) ենթակետի դրույթներին համապատասխան սահմանվում են անվանական կրթաթոշակներ:
2. Անվանական կրթաթոշակը սահմանվում է տվյալ մասնագիտության կամ հարակից բնագավառների մեծ ավանդ ունեցող խոշոր գիտնականների, գիտության և կրթության անվանի կազմակերպիչների անունով կամ էլ ռեկտորատի կողմից սահմանված այլ անվանաթոշակներով:
3. Անվանական կրթաթոշակը տրվում է արտաբյուջետային միջոցների հաշվին:
4. Անվանական կրթաթոշակը տրվում է համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա՝ երրորդ և բարձր կուրսերի գերազանցիկ և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողներին:
Բացառիկ դեպքերում կարող է ներկայացվել քննարկման ուսանողի թեկնածու, որն ունի 1-2 չորս գնահատական նախորդ կուրսերում: Անվանական կրթաթոշակի կարող են հավակնել անվճար և վճարովի համակարգի ուսանողները:
5. Անվանական կրթաթոշակ նշանակվում է համալսարանի բոլոր ֆակուլտետների երրորդ և բարձր կուրսերի վերը նշված պահանջներին բավարարող ուսանողներին:
6. Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողի թեկնածությունը լայնորեն քննարկվում է կուրսի, ֆակուլտետի, ՀՊԱՀ ուսանողական խորհրդում:
7. Առաջարկությունը կայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի և ուսանողական խորհուրդների համատեղ նիստում:
8. Անվանական կրթաթոշակի նշանակումը կատարվում է համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ: Գիտական խորհրդի նիստի որոշման հիման վրա համալսարանի ռեկտորը տալիս է հրաման:

1. Համալսարանում սահմանել հետևյալ
անվանական կրթաթոշակները

- 1.1. Ագրոնոմիական ֆակուլտետ
 - ակադեմիկոս Մ. Գ. Թումանյանի անվան
 - ակադեմիկոս Գ. Խ. Աղաջանյանի անվան
- 1.2. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ
 - ակադեմիկոս Վ. Ե. Թայիրովի անվան
 - ակադեմիկոս Զ. Բ. Դիլանյանի անվան
- 1.3. Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետ
 - Պրոֆեսոր Ս. Սահակյանի անվան
 - Պրոֆեսոր Հ. Մաքսապետյանի անվան
 - Ակադեմիկոս Ա. Մաթևոսյանի անվան
- 1.4. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետ
 - ակադեմիկոս Ա. Զ. Թամամչևի անվան
 - Ակադեմիկոս Ա. Ա. Ռուխկյանի անվան
- 1.5. Տնտեսագիտական ֆակուլտետ
 - Պրոֆեսոր Ա. Քոչինյանի անվան
 - Քաղաքական գործիչ Ա. Մարգարյանի անվան
- 1.6. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ
 - Պրոֆեսոր Բ. Մարտիրոսյանի անվան
- 1.7. Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ
 - Պրոֆեսոր Ի. Ծ. Եղիազարովի անվան
 - Քաղաքական գործիչ Ա. Ղ. Խանջյանի անվան

2. Սահմանել համալսարանի «Գիտական խորհրդի»
անվանական կրթաթոշակ

- 2.1. Համալսարանի «գիտական խորհրդի» կրթաթոշակը հատկացնել.
- 2.1.1. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետին՝ մեկ տեղ:

3. Լրացուցիչ դրույթներ

- 3.1. Անվանական կրթաթոշակի չափը որոշում է համալսարանի գիտական խորհուրդը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին:
- 3.2. Անվանական կրթաթոշակը ուսանողներին նշանակվում է ըստ կիսամյակների՝ կապված ուսանողների առաջադիմության հետ, հետագայում վերանայելով նշանակման հարցը:
- 3.3. Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետին հատկացվում է երկու անվանական կրթաթոշակի տեղ:
Ծանոթություն. Եթե որևէ ֆակուլտետում տվյալ ուսումնական տարում կամ կիսամյակում չկան անվանական կրթաթոշակի պահանջները բավարարող հավակնորդներ, ապա այդ տեղը (տեղերը) համալսարանի գիտական խորհրդի որոշումով կարող է ժամանակավորապես հատկացվել այլ ֆակուլտետի: